Արձանագրություն

Մայիսյան գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի մեկ տարվա կատարված աշխատանքների հաշվետվությունից :

Նախագահությամբ՝ Մ. Աբգարյանի
Քարտուղարությամբ՝ Վ. Հարությունյանի

Հաշվետու ժողովին մասնակցում էին համայնքի թվով 54 բնակիչներ և մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ պարոն՝ Ա. Այվազյանը:

Օրակարգում

Մայիսյան համայնքի ղեկավարի 2012 թվականի մեկ տարվա կատարված աշխատանքների մասին

Զեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Մովսիսյան

Հարգելի համագյուղացիներ , հարգելի պարոն Այվազյան Մայիսյան համայնքում 2012 թվականին կատարվել են մի շարք աշխատանքներ՝ բյուջեի եկամուտների հաշվին:
Վաղ գարնանը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1802-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցություն» ծրագրի շրջանակներում ներկրված պարարտանյութ /1 պարկը 6000 դրամ/ տեղափոխվել է համայնք և այն տրվել բնակչությանը :
Համայնքում սանիտարահիգենիկ մաքրությունը միշտ եղել է առաջնակարգ խնդիրը, որի համար կատարվել է աղբաթափման և աղբահեռացման աշխատանքներ՝ ծախսելով 1000.0 միլիոն դրամ:
Ձմռան ցրտի և անձրևների հետևանքով քայքայված գյուղամիջյան ճանապարհները գյուղապետարանը իր հնարավորությունների սահմաններում կատարել է փողոցների ավազապատման և հարթեցման աշխատանքներ, որի համար ծախսվել է 1000.0 միլիոն դրամ:

Համայնքում գործող նախադպրոցական կրթական հաստատություն, որպես դրամաշնորհ փոխանցվել է 784.500 դրամ, որտեղ սովորում են 4-6 տարեկան 30 երեխաներ:
2011-2012 թթ. ուսումնական տարում թերբեռնված 9-րդ դասարանի պահպանման ծախսերի իրականացման նպատակով «Մայիսյան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին որպես դրամաշնորհ տրվել է 1087.0 հազ. դրամ:
Մայիսյան համայնքից 2 կմ հեռավորության վրա է գտնվում Ծառաշեն թաղամասը , որտեղից 64 երեխաներ ձյան և անձրևի ժամանակ ոտքով հաճախում են Մայիսյանի միջնակարգ դպրոց , սակայն

գյուղապետարանը հնարավորություն է ստեղծել երեխաներին օգտվելու երթուղային տրանսպորտից :
Գյուղապետարանը դպրոցական երեխաների բուժզննման համար տրամադրել է տրանսպորտային միջոց:
Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում են գտնվում Հայրենական Մեծ պատերազմի վետերանների և Արցախյան պատերազմում անհայտ կորած մայիսյանցիների ընտանիքները՝ տալով դրամական օգնություն:
Համայնքում մեծ շուքով տոնվել է Մայիսյան գյուղի հիմնադրման 80-ամյակը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անկախության և Ամանորի միջոցառումներ:
Համայնքում խմելու ջուրն ապահովում և սպասարկում է «Նոր Ակունք» ՓԲԸ-ը, մատակարարելով 17 ժամյա ջրամատակարարում , սակայն շուրջօրյա մատակարարելու համար ավագանու որոշմամբ կատարվել է համայնքի կողմից ներդրում ՝ 1000.0 միլիոն դրամի, հին խողովակները նորով փոխարինելու :
Համայնքում գյուղապետարանի միջոցների հաշվին վերանորոգվել է տնամերձ հողամասերի ոռոգման խողովակները , որից օգտվում են 60 ընտանիքներ :
Համայնքում գյուղատնտեսական նշանակության բոլոր հողակտորներում իրականացվել է ագրոքիմիական քարտեզի գծագրում:
Համայնքում դեռ մնում է չլուծված 30 հա տնամերձ հողամասերի լիովին ոռոգման հարցը

2012 թվականի բյուջեի եկամուտները կազմել է՝
հողի հարկի գանձումներ՝ 95.3 %
գույքահարկի գանձումներ՝ 117.4 %
բյուջեն կատարվել է 100.9 %

Ելույթ ունեցան Հ. Միդոյանը, Հ. Հակոբյանը, Հ. Մելքոնյանը, Ա. Ահարոնյանը, որոնք համայնքի ղեկավարին առաջարկեցին համայնքում կատարել մի շարք հիմնախնդիրներ և այն ընդգրկել համայնքի զարգացման քառամյա ծրագրում : Իսկ համայնքի ղեկավարի 2012 թվականի մեկ տարվա կատարված աշխատանքները գնահատեցին լավ:

Ելույթ ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ Ա. Այվազյանը գոհունակությամբ արտահայտվեց համայնքում կատարված աշխատանքների վերաբերյալ ցանկացավ էլ ավելի շատ ներդրումներ կատարել համայնքի հետագա զարգացմանը, հողի հարկի և գույքահարկի գանձումները ժամանակին հավաքագրելու և այն ուղղելու համայնքում աշխատանքներ կատարելու , իսկ 2012 թվականին կատարված աշխատանքները գնահատեց լավ :

Համայնքի հիմնախնդիրները

1. 30 հա տնամերձ հողամասերի համար խորքային հորի վերանորոգում
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
3. Միջ համայնքային պետական նշանակության ճանապարհների ասֆալտապատում
4. Մշակույթի տան վերանորոգում

Հանձնաժողովի

նախագահ՝ Մ. Աբգարյան

քարտուղար՝ Կ. Հարությունյան